ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 10-ին և 11-ին Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության, ԳԱԱ պատմության ինստիտուտի և Վիեննայի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակին: Չնայած գիտաժողովը նվիրված է Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակին, բայց այնտեղ ներկայացվեցին ընդհանրապես միաբանության՝ Վենետիկի և Վիեննայի մխիթարյանների գործունեությունը: Պետք է գնահատել նախաձեռնող երեք հաստատությունների ջանքերն այդ բնագավառում. նման ներկայացուցչական գիտաժողովն այդքան բարձր մակարդակով կազմակերպելը հեշտ չէր: Եկել էին սփյուռքի տարբեր հայ գաղթավայրերի ներկայացուցիչներ (Վիեննա, Լիբանան, Վենետիկ, Իտալիա, Ավստրիա, Լեհաստան):

Շատ ջերմ էր նիստի բացման խոսքը, որը հնչեցրեց Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ *ընդգծելով մխիթարյանների կատարած գործի արժեքը հայագիտության բազմաթիվ բնագավառներում, գնահատելով նրանց ազգապահպան գործունեությունը: Ամենայն հայոց հայրապետի լիազոր ներկայացուցիչ* Նուբար եպիսկոպոս Հովհաննիսյանն *ընդգծեց Մխիթարյան միաբանության համազգային գործունեությունը՝ շեշտելով, որ նրանք միշտ բարձր են եղել դավանաբանական ճղճիմ վեճերից, և նրանց ուսումնասիրության հիմնական խնդիրներն ունեցել են համազգային բովանդակություն: Գիտական բարձր վերլուծություն էր պարունակում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դոկտոր* Վլադիմիր Բարխուդարյանի *ողջույնի խոսքը, ուր ընդգծվեցին մխիթարյանների ծավալած գիտական գործունեության բոլոր բնագավառները:*

Երկու օր շարունակ հնչեցին երկու տասնյակից ավելի հետաքրքիր զեկուցումներ, որոնք վերաբերում էին գիտության տարբեր բնագավառներին: Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ հինգ ինստիտուտների (Արևելագիտության, Արվեստի, Լեզվի, Գրականության, Պատմության) գիտական աշխատողները, Երևանի պետական համալսարանի դասախոսներ, Մաշտոցի անվան Մատենադարանի գիտնականներ, Մխիթարյան միաբանության տարբեր վայրերի հոգևորականներ (Վիեննա, Լիբանան) և Կրակովի Յագելոնյան համալսարանի ասպիրանտ:

Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Պողոս ծայրագույն վարդապետ Գոճանյանի *ընդհանրացնող զեկուցումը Մխիթարյան միաբանության անցած ուղու մասին էր, որը հենց սկզբից կարծես ծրագրողի նման ցույց տվեց անցած այն դժվարին ուղին և այն բնագավառները,*

որոնք եղել են միաբանության հոգևորական գիտնականների ուշադրության կենտրոնում: Ավստրիացի լրագրող Բարբարա Դենշերի *հայերեն կարդացած զեկուցումն ամփոփում էր Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանի գործունեությունը: Տիկին Դենշերը երկու լեզվով (գերմաներեն և հայերեն) լույս տեսած իր գրքույկները (նվիրված Մխիթարյանների տպարանի գործունեությանը) բաժանեց գիտաժողովի մասնակիցներին: Զեկուցումն ավելի ընդարձակ և ամբողջական պատկերացում էր տալիս տպարանի գործունեության վերաբերյալ, ցույց էր տալիս նրա ներդրումը եվրոպական մշակույթի զարգացման, այլալեզու գրականություն հրատարակելու գործում: Գիտաժողովի մասնակիցների համար մեծ հայտնություն էր Մատենադարանի գլխավոր ավանդապահ* Գևորգ Տեր-Վարդանյանի *«Հայերեն ձեռագրերի վիեննական հավաքածուն և Տաշյանի մեթոդը» թեմայով զեկուցումը: Իր խոսքում գիտնականը, որին քաջածանոթ էին Մաշտոցի անվան Մատենադարանի հայաստանյան հավաքածուները, մեծագույնս արժևորեց Վիեննայի ձեռագրերի հավաքածուն, պարզաբանեց Հակոբոս Տաշյանի գնահատելի ներդրումն այդ բնագավառում: Դարձյալ Հ. Տաշյանին, բայց այս անգամ նրա ծավալած գործունեության բոլորովին այլ բնագավառի էր վերաբերում ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ* Աշոտ Մելքոնյանի *զեկուցումը: Ժողովրդագրության մեջ իր մեծ ներդրումն ունեցած գիտնականն անդրադարձավ Հ. Տաշյանի աշխատություններում լուսաբանված ժողովրդագրության հարցերին՝ ցույց տալով, թե հետագայում դրանք ինչպես են նպաստել գիտության այդ ճյուղի զարգացմանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության լուսավորչական գործունեությունը լուսաբանվեց Մխիթարյան կրթահամալիրի տնօրեն հայր* Սերովբե վարդապետ Չամուրլյանի *«Վիեննայի Մխիթարյան միաբանության դպրոցների կրթական առաքելությունը» թեմայով զեկուցման մեջ, ուր մանրամասն խոսվում էր միաբանության՝ տարբեր վայրերում բացած դպրոցների, դրանցում աշխատող ուսուցիչների, սովորող աշակերտների, դասավանդվող առարկաների մասին: Առանձնապես գնահատելի է այն հանգամանքը, որ այդ կրթօջախներն ընդունվում են տարբեր դավանանքների աշակերտ–ուսանողներ և առանց խտրության սովորում ու ավարտում են միաբանության կրթօջախները:*

Գիտաժողովն աչքի էր ընկնում քննարկված հարցերի բազմազանությամբ: Վերը նշված հարցերին զուգահեռ կարդացվեց նաև կիրառական արվեստի՝ ճարտարապետության հարցերին նվիրված բովանդակալից զեկուցում: ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանի *«Հայ ճարտարապետության հիմնահարցերը «Հանդէս ամսօրեայի» էջերում» թեմայով զեկուցումը լսվեց մեծ հետաքրքրությամբ, քանի որ ներկայացվեց նաև մինչև օրս հրատարակվող ուսումնաթերթը՝ «Հանդէս ամսօրեան»: ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող* Էմմա Կոստանդյանի *զեկուցումը նվիրված էր Մխիթարյան միաբանության երկու մասնաճյուղերի՝ Վենետիկի և Վիեննայի՝ XIX դարասկզբի նշած երկու փառապանծ հոբելյաններին (1901 թ. սեպտեմբերի 8՝ Վենետիկի միաբանության 200-ամյակ և 1911 թ. սեպտեմբերի 8՝ Վիեննայի միաբանության 100-ամյակ), նաև այդ առիթով դրանց հրատարակած*

երկու արժեքավոր ժողովածուներին՝ «Հիշատակարան երկհարյուրամյա հոբելինի Մխիթարյան Միաբանության ի Վենետիկ 8 սեպտ. 1701–1901 սեպտ. 8» և «Հուշարձան. Գիտական ժողովածու առթիվ 100-ամյա հոբելինի հաստատման Մխիթարյան Միաբանության ի Վիեննա» խորագրերով, որոնք բացահայտում էին միաբանության երկու ճյուղերի համաեվրոպական և համահայկական գործունեության գրեթե բոլոր բնագավառները: ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող Գայանե Մխիթարյանը *«Մխիթար Սեբաստացին երաժիշտ և երգահան» զեկուցմամբ հետաքրքիր նորություններ բացահայտեց Մխիթար Սեբաստացու գործունեության վերաբերյալ այս բնագավառում, ցույց տվեց նրա ներդրումը հայ ազգային երաժշտության ասպարեզում:*

Գիտական վիճաբանությունների առարկա դարձավ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Ալեքսան Հակոբյանի *զեկուցումը, որը նվիրված էր հայր Ն. Ակինյանի կողմից Ն. Դասխուրանցու «Աղուանից պատմութեան» ուսումնասիրությանը: Ունկնդիրներն անհամաձայնություն հայտնեցին Աղուանից թագավորների մասին զեկուցողի հայտնած կարծիքին: Գիտական նորություն էր նույն ինստիտուտի փոխտնօրեն* Պավել Չոբանյանի *զեկուցումը՝ նվիրված Ախալցխայի վրացերեն ժամանակագրություններում արտացոլված Մխիթարյան հայրերի գործունեությանը: Վրացերենին մայրենիին հավասար տիրապետող արևելագետը հետաքրքիր փաստերով բացահայտումներ կատարեց վրաց ժամանակագրությունների վերաբերյալ: Արդեն 125 տարվա ճանապարհ անցած «Հանդէս ամսօրեան» իր էջերում լուսաբանել է տարբեր հարցեր՝ ամեն անգամ յուրովի նպաստելով հայագիտության զարգացմանը: Դրա արտացոլումն էին երկու զեկուցում՝ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող* Կարինե Ավետյանի *«Մատենագիտական նյութերը «Հանդէս ամսօրեայում» և Լեզվի ինստիտուտի գիտաշխատող* Տիգրան Սիրունյանի *«Լեզվաբանական հարցերը «Հանդէս ամսօրեայում» (1887–2010 թթ.)» թեմաներով: Բազմաթիվ նորություններ բացահայտեց Պատմության ինստիտուտի գիտաշխատող* Անահիտ Մուշեղյանը *«Վիեննայի Մխիթարյան միաբանության նպաստը հայ դրամագիտության մեջ» թեմայով զեկուցման մեջ: XIX–XX դարերում նոր զարգացող գիտության ճյուղ էր դրամագիտությունը, որի հայ առաջամարտիկները եղան Մխիթարյան հայր Կղեմես Միպիլյանը և Սիմոն Անտոնյանը: Առանձնապես պետք է ընդգծել Կղեմես Միպիլյանի ներդրումն այդ բնագավառում՝ Ռուբինյան արքայատոհմի դրամների հավաքածուի հայտնաբերման և դրանց մասին ընդարձակ ուսումնասիրություն գրելու գործում: Մխիթարյան միաբանության՝ գրականության մեջ ունեցած մեծ ավանդին էին նվիրված երեք զեկուցում: ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն* Ավիկ Իսահակյանը *ներկայացրեց Վիեննայի Մխիթարյան միաբանության դիվանում պահվող հայ հանճարեղ բանաստեղծ Ավ. Իսահակյանի ձեռագրերի հավաքածուն: Նույն ինստիտուտի փոխտնօրեն* Վարդան Դևրիկյանի *զեկուցումը քննում էր Վիեննայի Մխիթարյան միաբանության տպագրություններում տեղ գտած գեղարվեստական գրականության հարցերը: Հայ անվանի գրող, հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի՝ Մխիթարյան միաբանության*

գրական գործունեության գնահատության հարցերին էր նվիրված Երևանի պետական համալսարանի դասախոս Սերժ Սրապիոնյանի *զեկուցումը: Մխիթարյան միաբանությունն ունեցել է բազմաթիվ նշանավոր գիտնականներ: Սակայն այս գիտաժողովում ավելի շատ զեկուցումներ հնչեցին Հ. Տաշյանի մասին: Երրորդ զեկուցումը՝ նվիրված Հ. Տաշյանի գործունեության տարաբնույթ հարցերի քննարկմանը, կարդաց Լիբանանում գործող Մխիթարյան միաբանության վարդապետ հայր* Մեսրոպ Թոփալյանը: *Մխիթարյան միաբանության բազմակողմանի գործունեության հավաստիքն էին նաև երկու հետաքրքիր զեկուցում. Մատենադարանի գիտաշխատող* Ստելլա Վարդանյանը *ներկայացրեց միաբանության անդամների գործունեությունը բժշկագիտության բնագավառում, իսկ պետական համալսարանի դասախոս* Գայանե Պողոսյանը՝ *Վիեննայի մխիթարյանների կենսաբանության ոլորտի հրատարակությունները: Մեծ հետաքրքրությամբ լսվեց ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող* Անահիտ Բաղդասարյանի *«Այտընյան Բյոմ (Böhm) երգեցողությունք Սրբոյ պատարագի» զեկուցումը, որտեղ հեղինակը պատարագի տարբեր երանգների երգերով բացահայտում էր Այտընյանի մեծ ներդրումը նաև այդ բնագավառում: Սփյուռքի նախարարության աշխատակից* Վ. Պողոսյանը *զեկուցում կարդաց «Մխիթարյան միաբանության դերն ու նշանակությունը Սփյուռքում» թեմայով: Լեհահայ մխիթարյանների գործունեության վերլուծությանն էր նվիրված Կրակովի Յագելոնյան համալսարանի ասպիրանտ* Փիրուզ Մնացականյանի *զեկուցումը, որը հավաստեց վերջինիս կարողությունները և աշխատասիրությամբ արդյունքների հասնելու միտումը:*

Գիտաժողովն ամփոփվեց «Վիեննայի Մխիթարյան միաբանության ավանդը հայագիտության մեջ» զեկուցմամբ, որտեղ Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Պողոս ծ. վ. Գոճանյանն *անդրադարձավ միաբանության կազմավորմանը, կրթական կյանքին, հրատարակություններին և ձեռագրական ժառանգությանը:*

Երկու օր տևած միջազգային գիտաժողովի հաջողություններն ու արդյունքներն ակնառու էին:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ